

«անմաքուր» եղան: Ասոր համար մեր եւս «բանին Աստուծոյ զորս ընթեանումք, եւ սուրբ անուան նորա յիշմամբ եւ խաչին դրոշմամբ» կը սրբենք աղբ եւ կու տանք կենդանւոյն, որպէս զի ուտելով մաքրուի «ի վերջնոյ անիծիցն», եւ արժանի նուէր դառնայ Աստուծոյ (Ընդհ. 161): Այս բարեքիկ մեկնութիւնս սակայն չի ժխտեր աղին հրէական ծագումը մեր մէջ:

6. — Եփուսն: — Այսուհետեւ կը մորթէին անասունն ու կ'եփէին: Տրուղեան ժողովը, որ կատարուեցաւ ի Կ. Պոլիս 692ին, իւր ՂԹ կանոնն ուղղած է Հայոց դէմ, որոնք՝ կ'ըսէ՝ «սուրբ սեղանոց վրայ եփելով մսեղեաց անդամները, հրէաբար մասեր կը նուիրեն քահանայից»: Մեր հարց վերագրուած այս սովորոյթը սակայն յիշուած չէ բնաւ այլուր. եւ դըժուարին է ընդունիլ՝ թէ մեր նախնիք կրակ վառէին Պատարագի սեղանին վրայ եւ աղօթավայրը լեցնէին ծխով ու ճենճերով: Հայ եկեղեցւոյն յօրինուածն ինքնին անյարմար էր այդ գործին: Հաւանական է՝ թէ ժողովը թելագրուած է հակառակորդաց խեղաթիւր լեզուէն, որոնք շարժած կը թուին մատաղին ս. սեղանին վրայ դրուելէն. սովորութիւն՝ որուն կ'ակնարկէ Մխիթար, ըսելով պատարագեալ